Ալբերտ Խառատեան, *Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօճախը (XV-XVII Դարեր)*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 2007, 472 էջ:

Հայ պատմագիտութեան առանձին եւ կարեւոր ասպարէզներից է հայկական գաղթավայրերի պատմութիւնը, որի նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան համար անգնահատելի է: Հայ պատմաբանների կողմից արդիւնաւէտ աշխատանք է կատարուել առանձին գաղթօճախների պատմութիւնը ուսումնասիրելու ուղղութեամբ: Հարկ է նշել, որ այս ասպարէզի մէջ անելիքները դեռեւս շատ են: Այդ է պատճառը, որ հայկական գաղթօճախների պատմութեան հանգուցային շատ խնդիրները լուսաբանելու աշխոյժ հետաքրքրութիւնը շարունակւում է նաեւ այսօր: Ասուածի փայլուն ապացոյցն է պատմական գիտութիւնների դոկտոր Ալբերտ Խառատեանի *Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօճախը (XV-XVII Դարեր)*, ստուարածաւալ աշխատասիրութիւնը, ուր լուսաբանւում են Կ.Պոլսի հայ գաղթօճախի պատմութեան մի շարք հանգուցային հարցեր:

Ընդգրկում է մենագրութեան բովանդակութիւնը: Այն բաղկացած է առաջաբանից, չորս գլխից եւ վերջաբանից: Աշխատասիրութիւնը ունի նաեւ ծանօթագրութիւնների, մատենագիտական, օգտագործուած նիւթերի, յատուկ անունների, տեղանունների հարուստ ցանկեր:

Հեղինակը իր մենագրութիւնը շարադրել է հայ եւ օտար աղբիւրների մենագրութիւնների, նիւթին առնչուող յօդուածների, հրապարակումների հիման վրայ:

Ուսումնասիրութեան արժէքները ակնյայտ են:

Օգտագործուած գրականութեան նիւթերի նկատմամբ դրսեւորուել են հեղինակի պատմա-քննական մօտեցումը եւ եզրակացութիւնների ինքնուրոյնութիւնը:

Կ.Պոլսի գաղթօճախի մի շարք հանգուցային հարցեր, ինչպիսիք են՝ գաղթօճախի կազմաւորումը, Կ.Պոլսի Հայոց Պատրիարքութեան հոգեւոր-վարչական նկարագիրը, եկեղեցիների պատմութիւնը, պատրիարքական իրաւասութիւնները, հայ համայնքի տեղը օսմանեան աւանդական հասարակութեան մէջ, գաղթօճախի բնակչութեան թուաքանակը, հայ համայնքի սոցիալ-տնտեսական կեանքը, հարկային համակարգը եւ այլ հիմնահարցեր ներկայացուած են խոր գիտական դատողութիւններով եւ համոզիչ եզրայանգումներով:

Աշխատութեան աւելի քան չորս տասնեակ էջ կազմող Յառաջաբանում, Խառատեան անդրադառնում է Կ.Պոլսի հայ գաղթավայրին նուիրուած պատկառելի պատմագիտական գրականութեան կարեւորութեանն ու նշանակութեանը, ուր աւելի կամ պակաս խորութեամբ քննարկուել են վերը նշուած եւ այլ հիմնահարցեր:

Գիտական պատշաճ մօտեցում ցուցաբերելով այդ գրականութեան, հեղինակը միաժամանակ ներկայացնում է իր առարկութիւնները եւ անհամաձայն է գտնւում տեղ գտած որոշ սխալ գնահատականների հետ:

Նման դէպքում հեղինակը պարզաբանում է հարցերը եւ ներկայացնում իր համոզիչ դատումները:

Աշխատութեան առաջին գլխում՝ «Գաղթօճախի Կազմաւորումը» վերնագրով, հեղինակը հանգամանօրէն քննարկում է գաղթօճախի առաւել ամբողջական պատկերը: Սոյն գլխի «Հայ Համայնքը Օսմանեան Մայրաքաղաքում» ենթաբաժնում լուսաբանուած է Կ.Պոլսում հայ համայնքի կազմաւորման հիմանահարցը: Խառատեանը Կ.Պոլսում հայկական համայնքի գոյութիւնը կապում է բիւզանդական ժամանակներին, որի առաջացման նախադրեալները համարում է հայ-բիւզանդական ռազմաքաղաքական եւ մշակութային յարաբերութիւնները: Ուշագրաւ է հեղինակի հետեւեալ միտքը. «*Անկախ համայնքը կազմող հայերի թուաքանակից՝ այն հանդէս է գալիս իբրեւ էթնակրօնական որոշակի միաւոր՝ հոգեւոր գլուխ ունենալով իր առաջնորդ եպիսկոպոսին*» (էջ 49-50): Այստեղ հեղինակը օգտագործած է ժամանակի գրաւոր վկայութիւնների եւ այլեւայլ յիշատակարանների տրամադրած յատուկ փաստերը:

Հեղինակը սպառիչ լուսաբանում տուած է թէ հայ համայնքը կարողացա՞ւ արդեօք պահպանել իրեն օսմանեան թուրքերի կողմից Կ.Պոլիսը գրաւելուց յետոյ: Հեղինակը նշում է որ Կ.Պոլսի համայնքի ստուարացումը եւ դրա համեմատ՝ որակական փոփոխութիւններով ի նորոյ կազմաւորումը սկսւում է բիւզանդական մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիսը սուլթան Մեհմէտի կողմից գրաւելուց յետոյ: Հեղինակը հանգամանալից ներկայացնում է Մեհմէտ Բ.ի բռնագաղթով Կ.Պոլսի վերաբնակեցման քաղաքականութիւնը:

Հիմնաւոր է հեղինակի այն տեսակէտը թէ «*Մայրաքաղաքի վերաբնակեցման միտքը յղանալիս սուլթանը հետապնդում էր եւ տնտեսական եւ կրօնաքաղաքական նպատակներ՝ իսլամի նոր կենտրոնում ապահովել մահմետականների տիրապետող դիրքին համապատասխան մեծամասնութիւն, թուլացնել նուաճուած տարածքների այլակրօններին՝ նրանց կարող ու կենսունակ ուժերը բռնի Կ.Պոլիս տեղափոխելով, թալանել նրանց ունեցուածքը, ջլատել ենթադրուելիք դիմադրական հնարաւորութիւնները*» (էջ 51-52):

1450-70ականներին սուլթան Մեհմէտի գործադրած բռնագաղթերի հետեւանքով բազմահազար հայեր բռնի Կ.Պոլիս տեղափոխուեցին Անկիւրիայից, Պրուսայից, Կարամանից, Կեսարիայից, Աղրիանուպոլսից, Սամսոնից, Թոքատից, Տրապիզոնից, Ղրիմից, Ակքերմանից, Ամասիայից, եւն. (էջ 54-59):

Հեղինակը այս ենթաբաժնում անդրադարձել է նաեւ Կ.Պոլիս բռնագաղթուած բնակչութեան, այդ թւում եւ հայ բնակչութեան բնակեցման հարցի պարզաբանմանը:

Արժէքաւոր է հեղինակի այն ընդգծումը որ «*Կ.Պոլիս բերուած ժողովուրդները, այդ թւում եւ հայերը, հիմնականում բնակեցւում էին հայրենակցական խմբերով, որ թելադրւում էր գաղթի տրամաբանութեամբ. գաղթականների կուտակումը միեւնոյն թաղերում՝ ամփոփում էր նրանց որոշակի սահմաններում: Դա համախումբ էր դարձնում տուեալ էթնիկական խումբը, որ նախընտրելի էր ոչ միայն իրենց՝ գաղթականների համար (ազգային, կրօնական ընդհանրութիւն, միեւնոյն զբաղմունքի՝ արհեստների, առեւտրի գործառական դիւրութիւն), այլեւ հեշտացնում էր օսմանեան իշխանութիւնների գործը՝ բնակչութեան հաշուառման ու ցուցակագրման, հարկեր գանձելու եւ, առհասարակ, համայնքների նկատմամբ վերահսկողութիւն հաստատելու տեսակէտից*» (էջ 69):

Հեղինակը մանրամասնօրէն անդրադարձած է նաեւ սուլթան Մեհմէտի յետնորդների ժամանակ իրականացուած բռնագաղթերին: Նշում է որ 1510ականներից վերսկսած թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով 1514, 1554, 1578-1579ին Կ.Պոլսում վերաբնակեցում են հայ գաղթականների նոր բազմութիւններ՝ Պարսկաստանի հայաբնակ շրջաններից, մասնաւորաբար Թաւրիզից, Արարատեան դաշտից՝ Նախիջեւանից, Երեւանից, դրանց յարող տարածքներից, Արցախից (էջ 70):

Հեղինակը այստեղ լուսաբանում է այն աղիտալի կացութիւնը որ ստեղծուեց կայսրութեան մէջ դէպի Կ.Պոլիս գաղթերի պատճառով: Այս հարցի հետ կապուած, լուսաբանուած է նաեւ 1609ի եւ 1635ի *սիրգիւնի* աբսորի հարցը: Խառատեան նշում է որ «*Օտար եւ հայ աղբիւրներից երեւում է որ* XVI*դ. կէսին հայերի թիւը Կ.Պոլսում հասել է* 40-50 *հազար մարդու, եւ* XVI*դ. վերջին եւ* XVII*դ. սկզբին* 60-70 *հազար մարդու,* XVII*դ. վերջին աւելի քան* 70 *հազար մարդու*» (էջ 365):

Խառատեան լուսաբանելով օսմանեան մայրաքաղաքում հայ համայնքի կազմաւորման հարցը, եզրակացնում է. «*Այսպիսով Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում հայ գաղթօճախի կազմաւորումը սկսում է* 1450*ական թթ. երկրորդ կէսից, երբ այնտեղ վերաբնակեցուեցին Մեհմէտ Բ.ի կողմից բռնագաղթի ենթարկուած հայերը ...*» (էջ 70): Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մենագրութեան Ա. գլխի «Հոգեւոր Վարչութիւն: Առաջնորդութիւնից Մինչեւ Պատրիարքութիւն» ենթաբաժինը:

Հեղինակը աղբիւրային հարուստ նիւթերի հիման վրայ ներկայացնում է Կ.Պոլսի գրաւումից յետոյ մայրաքաղաքում եւ կայսրութեան մէջ իսլամ ազգաբնակչութեան կողքին ձեւաւորուող յոյն, հայ, հրեայ համայնքներին պետութեան կողմից պաշտօնական ճանաչման ու իրաւական իմաստով միլլէթների - համայնքների համակարգի մէջ ընդգրկելու գործընթացը: Հեղինակը ընդգծում է, որ կրօնական այս համայնքները առանձնացուեցին դաւանական, աւանդութային եւ մշակութային կարգավիճակով՝ խմբուելով իրենց կրօնապետերի շուրջը. «*Յոյն պատրիարքութիւնից յետոյ սկզբնաւորուեց Կ.Պոլսի հայ հոգեւոր վարչութիւնը՝ առաջնորդ կրօնապետի (հայրապետի) գլխաւորութեամբ*» (էջ 89):

Վերլուծուած է հայ պատմագրութեան մէջ տեւական վէճերի տեղիք տուած Յովակիմ հոգեւորականի (եպիսկոպոս, պատրիարք) պաշտօնավարութեան հանգամանքները: Հեղինակը ընդգծում է որ «*պէտք է կարծել, որ առաջինը Յովակիմն էր, որ հայ համայնքում օժտուել է պատրիարքական իրաւասութիւններով, եւ այս պատճառով է, որ Չամչեանը նրան համարում է առաջին պատրիարք*» (էջ 366):

Հեղինակը աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների վրայ, գտնում է որ այս Յովակիմը միեւնոյն անձն է ինչ այդ անուամբ յայտնի Կուտինայի առաջնորդը (1445) եւ Պրուսայի ու Կ.Պոլսի առաջնորդը (1447) (էջ 366):

Վկայակոչելով ժամանակի ձեռագիր յիշատակարանները, Խառատեանը գտնում է որ 1461ից դարձեալ այս Յովակիմը Կ.Պոլսի հայերի առաջնորդն էր... «*Հետեւաբար Յովակիմն անընդմէջ չի վարել իր պաշտօնները, այլ ընդհատումներով*», եզրակացնում է հեղինակը (էջ 93):

Մենագրութեան հեղինակը այս ենթաբաժնում անդրադարձել է նաեւ հայ հոգեւոր առաջնորդների պատրիարքական տիտղոսի հարցին, որը ըստ հեղինակի *«բաւական չարչրկուած հարց է դարձել գաղթօճախի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւնների մէջ»* (էջ 94):

Այս գլխում հեղինակը հանգամանօրէն վերլուծած է Կ.Պոլսի գաղթօճախի պատմութեան համար երկու կարեւոր հարց.-

Արդեո՞ք Կ.Պոլսի հայ հոգեւոր առաջնորդի իշխանութիւնը տարածւում էր ամբողջ կայսրութեան մէջ բնակող հայութեան վրայ, թէ՞ նրա հոգեւոր իրաւասութեան ներքոյ էին գտնւում կայսրութեան տարածքի մէջ մտնող հայկական միւս թեմերը: Սրան առնչւում է երկրորդ հարցը՝ Կ.Պոլսի հայ հոգեւոր պետին XVդ. արդեօք տրուել է «պատրիարք» տիտղոսը՝ *«որ նրան ոչ միայն կ՝առանձնացնէր կայսրութեան մէջ մտնող միւս վիճակների կամ թեմերի առաջնորդներից, այլեւ կը նշանակէր, որ այս վերջինները կամ դրանց մի մասը ենթարկուել են նրա գերակայութեանը»*, գրում է հեղինակը (էջ 95):

Խառատեան ընդունելի է գտնում այս հարցին առնչուող պատմական գրականութեան մէջ եղած այն տեսակէտը, թէ Կ.Պոլսի հայ առաջնորդների պատուանունը աւելի ուշ շրջանում է (սուլթան Մեհմէտից յետոյ) գործածութեան մէջ մտել:

Հիմք ընդունելով աղբիւրների հաղորդած տեղեկութիւնները՝ հեղինակը այնուհետեւ եզրակացնում է, որ *«Պատրիարք տիտղոսի գործածութեան սկիզբը պէտք է որոնել առայժմ 1526 եւ 1540 թուականների միջեւ: ...Այդ ժամանակից իսկ Էջմիածնի կաթողիկոսները կորցրել են իրենց ազդեցութիւնը Կ.Պոլսի հոգեւոր առաջնորդների վրայ, որոնք նշանակուել են ոչ թէ եկեղեցական կանոնով՝ Էջմիածնի կողմից, այլ՝ օսմանեան սուլթանների»* (էջ 97-98):

Ուշագրաւ են նաեւ հեղինակի տրամաբանական հետեւեալ դատողութիւնները. *«Անկախանալով Էջմիածնի հոգեւոր վարչական գերակայութիւնից՝ Կ.Պոլսի հոգեւոր գլուխը անկախանում էր օսմանեան պետութեան դարաւոր ոսոխի՝ Պարսկաստանի ենթակայութեան ներքոյ գտնուող հոգեւոր սիւզերէնից՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով, որ համապատասխանում էր օսմանեան պետութեան շահերին: Դրա հետ կախուած, կոչուելով պատրիարք, իրրեւ մէկից աւելի վիճակների վերահսկող եւ հովուող կրօնական պաշտօնեայ, Կ.Պոլսի պատրիարքները ամէնամեայ հարկ (այդ թւում եւ վիճակներից կամ թեմերից ստացուող հարկը՝ մուքաթաան) պէտք է տային պետութեան...»* (էջ 98-99):

«Օսմանեան հարկային համակարգում Կ.Պոլսի առաջնորդների գործառութային դերի ընդլայնումը այդպիսով ի վերջոյ պէտք է հասցնէր կայսրութեան մէջ նրանց իրաւունքների եւ պարտականութիւնների աննախընթաց աճին՝ եւ համապատասխանաբար դրանց թուլացմանը՝ Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած յարաբերութիւններում: ...Մնում էր, սակայն, բարոյական աւանդոյթի ուժով պատասխանատուութիւնը կաթողիկոսի առջեւ, որ, ի դէպ, արդէն XVIIդ. բազմաթիւ ճեղքեր պէտք է տար՝ օսմանեան մայրաքաղաքում կաթողիկոսի հեղինակութիւնը ոչ քիչ դէպքերում վերածելով ընդամէնը վերացական հասկացութեան» (էջ 99):

Այս գլխի վերջին՝ «Եկեղեցիներ» խորագրով ենթաբաժնում, Խառատեան ընթերցողին է ենթարկում պոլսահայ հանրութեան սկզբնաւորման եւ յետագայ

պատմութեան ողջ ընթացքում կարեւոր նշանակութիւն ունեցող Կ.Պոլսի գաղթօճախի եկեղեցիների հիմնադրման կամ նոյնականութեան խնդիրը, որը ըստ հեղինակի *«տարակարծութիւնների տեղիք է տուել եւ շարունակում է տալ ուսումնասիրողներին»* (էջ 107-124):

Մենագրութեան Բ. գլխում՝ «Կ.Պոլսի Պատրիարքութիւնը», Խառատեան լուսաբանում է գաղթօճախի պատրիարքական իրաւասութիւնները, ներհակութիւնները, պայքար պատրիարքութեան համար, օսմանեան Թուրքիայի հայոց կաթողիկոսութեան շուրջ եւ Կ.Պոլսի երէցները եւ պատրիարքական իշխանութիւնը հիմնահարցերը:

Արժէքաւոր է հեղինակի այն ընդգծումը, որ *«Լինելով օսմանեան հասարակական համակարգի բաղկացուցիչ մաս՝ միլլէթները ամէնից առաջ հանդէս էին գալիս իբրեւ կրօնական կենտրոնացուած միաւորներ: Համայնքի գլխաւոր կրօնապետն էր, որն իր ժողովրդի իրաւական ներկայացուցիչն էր օսմանեան պետութեան առջեւ:*

Յոյն եւ հայ պատրիարքներն, ինչպէս եւ հրեայ խախամապետը, իբրեւ իրենց համայնքի գլխաւորներ հոգեւոր գերակայութեան ձեւի մէջ փաստօրէն իրականացնում էին աշխարհիկ քաղաքացիական գործառոյթներ» (էջ 126):

«Այսպիսի երկփեղկուածութիւնը բխում էր օսմանեան քաղաքացիական ու կրօնական կառոյցների տրամադրութիւնից, որ յստակ չէր սահմանազատում կրօնական, օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնները», եզրակացնում է հեղինակը (էջ 368):

Խառատեան անդրադառնալով Կ.Պոլսի գաղթօճախի պատրիարքների նշանակման եւ հաստատման հարցին, գտնում է որ պատրիարքների հաստատման գործում օսմանեան գործադիր իշխանութեան էական միջամտութիւնը պատրիարքական ընտրութիւն հասկացութիւնը դարձնում է զուտ ձեւական մի բան, որին աւելի մեծ յաջողութեամբ կարելի էր տալ պատրիարքի նշանակութեան իմաստ: *«Եւ այս տեսակէտից՝ պատրիարքի ընտրութիւն՝ դարձուածքը կարծում ենք պէտք է ընկալել զուտ պայմանական բովանդակութեամբ»*, շեշտում է հեղինակը (էջ 127):

Այս գլխում խօսում է նաեւ XVIIդ. Կ.Պոլսի գաղթօճախի պատմութեան լուսաբանման համար կարեւոր նշանակութիւն ունեցող հարցի՝ պատրիարքական կոիւների եւ դրանց հիմքում ընկած պատճառների մասին:

Հեղինակը գտնում է որ այդ կոիւների հիմքում ընկած են մէկից աւելի պատճառներ. *«այդպիսիք են հայ կրօնական կենտրոնների մրցակցութեան բեւեռացումը Կոստանդնուպոլսում, որ ներկայացնում էին Էջմիածինը եւ բաւական թուլացած, բայց դեռեւս իր յաւակնութիւններից չհրաժարուած Սիսը: Այնուհետեւ այդ հիմքերից էին կաթոլիկական Ֆրանսիայի միջոցով Հռոմի քաղաքականութեան հակումները՝ ստեղծելու օսմանեան Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայերի առանձին կաթողիկոսութիւն, որ դրսեւորուելու էր երկիցս՝ Սահակի* (1630) *եւ Եղիազար Այնթապցու* (1659-1670*ական թթ.*) *գործունէութեան ընթացքում: Եւ վերջապէս, այս վերջին իրողութիւնը յստակօրէն ուրուագծւում էր ամբողջ* XVII *դարում՝ լատինասէրների եւ պահպանողականների միջեւ մղուող պայքարի ձեւով...»* (էջ 162-163):

Մենագրութեան այս գլխում գիտական խոր վերլուծութեան ենթարկուած են նաեւ վերը նշուած հարցի հետ սերտօրէն առնչուած՝ օսմանեան Թուրք-

իայի հայոց կաթողիկոսութեան շուրջ եւ Կ.Պոլսի երէցները եւ պատրիարքական իշխանութեան հարցերը:

Հեղինակը գտնում է, որ Օսմանեան Թուրքիայում կաթողիկոսութիւն ստեղծելուն հետամուտ Եղիազար Այնթապցու «*ձգտումները եւ դրանից ծայր առնող գործողութիւնները չունէին այլ նպատակ, քան Էջմիածնի, որպէս ընդհանրական աթոռի եւ համազգային հեղինակութեան դերի վերացումը*» (էջ 224):

Այդ գործողութեան նպատակը բնութագրելու համար Խառատեան աչքի առջեւ ունեցած է գործողութեան հետեւանքները:

Վերլուծած է Եղիազարի գործունէութեան հետեւանքները Էջմիածին-Կ.Պոլիս-Երուսաղէմ յարաբերութիւններում:

Այստեղ արժէքաւոր են հեղինակի եզրայանգումները. «*Թուլանում են Էջմիածնի դիրքերը Կ.Պոլսի եւ Արեւմտահայաստանի թեմերում, եւ Էջմիածինն իր ողջ ուժերն ու կարողութիւնները ծախսում է իր, թէկուզ եւ անուանական ազդեցութիւնը այստեղ պահպանելու վրայ: Թուլանում է եւ Կ.Պոլսի պատրիարքութիւնը, որը պարզապէս կորցնում է իր ինքնուրոյնութիւնը եւ դառնում սոսկ միջոց կամ յենակէտ Էջմիածնի եւ Եղիազարի ու սրանց սատարող ուժերի դէմ մղուող բախումներում: Երուսաղէմի պատրիարքութիւնը եւս, Կ.Պոլսի պատրիարքութեան հետ, կրում էր այդ անպտուղ պայքարի դառը հետեւանքները*» (էջ 224):

«*Եղիազարի եւ Մարտիրոսի պատրիարքութիւնից յետոյ՝ 1680ական թթ. Երուսաղէմը վերածուեց Կ.Պոլսի հոգեւոր եւ աշխարհիկ վերնախաւի անձանց շահատակութիւնների հրապարակի, եւ այստեղ ծաւալուող թալանի ու կողոպուտի, կամայականութեան ու շահամոլութեան խրախճանքը պէտք է վիթխարի պարտքերի տակ գցէր Երուսաղէմի միաբանութեանը՝ մինչեւ Յովհաննէս Կոլոտի ու Գրիգոր Շղթայակրի ժամանակները (1710ական թթ.)*» (էջ 224-225):

«*Եղիազարի եւ Էջմիածնի հակադրութիւնից մեծապէս տուժեց Կ.Պոլսի պատրիարքութիւնը, որին տիրելու համար ներհակ կողմերի դրածոները սկսեցին մի ծանր եւ երկարատեւ պայքար՝ թուլացնելով եւ կասեցնելով օսմանեան Թուրքիայի հայ վիճակները համախմբելու կոչուած Կ.Պոլսի պատրիարքութեան գօրացման հնարաւորութիւնները՝ մի քանի տասնամեակ շարունակ*» (էջ 225):

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մենագրութեան Գ. գլուխը՝ «Սոցիալ-տնտեսական Կեանքը» վերնագրով, ուր հեղինակը քննարկում է արհեստաւորական-առեւտրական էսնաֆը, հայ վաճառականութիւնը Կ.Պոլսում, հարկային համակարգը Կ.Պոլսի հայ գաղթօճախում հարցերը:

Հեղինակը գտնում է, որ Կ.Պոլիսը գրաւելուց ի վեր արհեստաւորութիւնը կազմել է նրա բնակչութեան, այդ թւում հայ համայնքի ամենամարդաշատ տարրը: Հիմնուելով պատմագիտական եւ աղբիւրային հարուստ տուեալների վրայ, Խառատեան շեշտում է, որ «*վերածուելով հայութեան աշխարհագրական եւ ազգագրական տարածքները ամփոփող մի մանրակերտի՝ Կ.Պոլսի հայ արհեստաւորական ու առեւտրական խաւերը, իրենց թուաքանակի համեմատութեամբ, ներկայացնում էին զբաղմունքների շատ մեծ բազմազանութիւն,*- եւ, որ,- *իրենց սոցիալական կացութեամբ եւ կարգավիճակով նրանք ինչպէս եւ*

օսմանեան կայսրութեան միւս հպատակ ժողովուրդների նոյնական խաւերը, մտնում էին այսպէս կոչուած էսնաֆի (ասնաֆ) առեւտրաարհեստաւորական կազմակերպութիւնների մէջ» (էջ 248): Առկայ տուեալներից դատելով, հեղինակը գտնում է որ *«որոշ արհեստների խմբում քրիստոնեայ, այդ թւում եւ հայ արհեստաւորները միաւորուել են մահմետական արհեստակիցների հետ՝ կրօնական տեսակէտից կազմելով խառն կազմակերպութիւններ։ Արհեստների մէկ այլ խմբում նրանք գործել են առանձին՝ իրրեւ զատ եւ անկախ էսնաֆութիւններ»* (էջ 252):

Խառն էսնաֆութեան մէջ գտնուելը *«նշանակում էր երկու տարբեր կրօնարարոյական նորմերի համատեղ գոյութիւն, մահմետական եւ ոչ մահմետական բարոյական նորմերի զուգահեռ գործողութիւն, որտեղ պէտք է իրեն գգացնել տար կրօնական հակամարտութիւնը՝ մահմետականների անհանդուրժողականութիւնը այլահաւատների նկատմամբ»* (էջ 254), եզրակացնում է հեղինակը:

Խառատեանը նշում է որ Կ.Պոլսի հայ էսնաֆը ունէր կազմակերպական որոշակի կառուցուածք. *«Արհեստաւոր արտադրողների գլուխ էր կանգնած վարպետը, նրանից ներքեւ՝ ենթավարպետը, եւ ստորին աստիճանին՝ աշակերտը (չրագ)»* (էջ 255):

Արժէքաւորը հեղինակի այն ընդգծումն է, որ *«էսնաֆի բարոյական վարքագծի նորմերն ամփոփող կանոնադրութիւնից բացի եւ դրա կողքին գործում էին նաեւ օսմանեան օրէնքները, որոնց միջոցով պետութիւնը վերահսկում էր արհեստաւորի արտադրական գործունէութիւնը, գլխաւորապէս արդիւնքների համար անհրաժեշտ հումքի հայթայթումը, իրացումն ու դրան առնչուող պայմանները»* (էջ 257):

Հեղինակը այստեղ բացայայտում է իշխանութիւնների կողմից ոչ-մահմետական արհեստաւորի եւ սպառողի նկատմամբ խտրականութիւն կիրառելու իրողութիւնը: Այս գլխում հեղինակը ցոյց է տալիս, որ ոչ-մահմետական ժողովուրդներն (այդ թւում եւ հայերը) էին, որ ամէնից առաջ ընթացք եւ ուղղութիւն էին տալիս ամէնուրեք՝ կայսրութեան մէջ, արհեստների եւ առեւտրի զարգացմանը:

Այս գլխում ուշադրութեան կենտրոնում են պահուել նաեւ գաղթօճախի հայ վաճառականութեան եւ հարկային համակարգի հարցերը:

Հեղինակը պատմաբան մասնագէտի բծախնդրութեամբ է լուսաբանում այդ հարցերը:

Անդրադառնալով հարկային համակարգին՝ Խառատեանը ընդգծել է այն միտքը, թէ մահմետականների համեմատութեամբ, ոչ-մահմետականների ստորադաս վիճակը օսմանեան Թուրքիայում ի յայտ էր գալիս հարկային համակարգում:

Հեղինակը հարուստ նիւթերի օգտագործմամբ, ամբողջացնում է Կ.Պոլսի հայութիւնից գանձուող հարկատեսակների, տուրքերի գանձման եղանակների եւ դրանց հետեւանքների պատկերը:

Խառատեանի մեկնաբանութիւնները հնարաւորութիւն են ընձեռում ճիշտ հասկանալու այդ հարցերի հետ կապուած բոլոր իրողութիւնները:

Մենագրութեան վերջին գլուխը կրում է՝ «Կ. Պոլսի Հայ Հանրութիւնը եւ Օսմանեան Աւանդական Հասարակութիւնը» խորագիրը:

Այս գլխի առաջին ենթաբաժնում հեղինակը բազմակողմանի մեկնաբանել է գաղթօճախը օսմանեան հասարակութեան մէջ հարցը:

Խառատեան նշելով որ օսմանեան մայրաքաղաքում ոչ-մահմետական միլլէթները մի յայտնի չափով օգտւում էին մշակութային ինքնավարութիւնից՝ տրուած արտօնութիւնների շնորհիւ, ընդգծում է այնուհետեւ հետեւեալ միտքը, որ «*միլլէթների համակարգի ինքնավարութիւնը, սակայն, չափազանց փխրուն բնոյթ ունէր օսմանեան պետութեան մէջ*» (էջ 307):

«*Հենց միայն այն իրողութիւնը, որ շերիի դատարանն իրաւասու էր քննութեան առնելու եւ վճիռ կայացնելու ոչ-մահմետական միլլէթներին վերաբերող որեւէ գործի նկատմամբ, ինքնին վկայում էր տիրապետող կրօնի՝ օսմանեան բոլոր հպատակների հանդէպ գրաւած գերակայ դիրքի մասին*» եզրակացնում է հեղինակը (էջ 307-308):

Այս բաժնում Խառատեան լուսաբանում է օսմանեան պետութեան մէջ մահմետականների հետ ոչ-մահմետականների կենցաղային յարաբերութիւնների, պաշտամունքային կառոյցների նորոգման, տարազի, հագուստի, գոյների վերաբերեալ օրէնսդրական նորմերի հարցերը:

Ուշագրաւ է հեղինակի եզրակացութիւնը. «*Մահմետականների հետ ոչ-մահմետականների կենցաղային յարաբերութիւններում, պաշտամունքային կառոյցների նորոգման սահմանափակումներում, տարազի հագուստի գոյների վերաբերեալ օրէնսդրական նորմերը օսմանեան պետութեան մէջ հանդէս էին գալիս որպէս բռնութեան արտատնտեսական միջոցներ*» (էջ 378):

Այս գլխի երկրորդ ենթաբաժնում պատշաճ լուսաբանուած է գերութեան համակարգը օսմանեան կայսրութիւնում, որը ըստ հեղինակի «*սկիզբ էր առնում եւ վերարտադրւում երկու հիմնական ուղղութիւններով՝ պատերազմի միջոցով գերեվարութիւնների (ռազմագերիներ, պարտուած երկրների ազգաբնակչութեան ստրկացում) եւ արդէն նուաճուած ու կայսրութեան տարածքում ընդգրկուած ոչ-մահմետական ժողովուրդների հաշուի (դեւշիրմէ, մանկահաւաք)*» (էջ 328):

Հեղինակը ընդունելով որ Օսմանեան Կայսրութեան մէջ գերեվարութեան համակարգի հիմնական աւանդոյթն ու բաղկացուցիչ մասը կազմում է *դեւշիրմէն*, յանգում է այն եզրակացութեան, որ *դեւշիրմէն* «*կայսրութեան ոչ մահմետական ժողովուրդների իրաւազրկութեան ամենաակնառու եւ բարբարոսական դրսեւորումն էր, որի միջոցով պետութիւնը ռազմավարչական եւ տնտեսական բնագաւառներն անընդմէջ լրացնում էր մարդկային ռեսուրսներով,*- եւ որ,- *դեւշիրմէն հանդէս էր գալիս որպէս միջոց՝ մահմետականացած երիտասարդութեամբ լրացնելու ոչ-հարկատու ասկերների դասը*» (էջ 340, 378):

Այս բաժնում գնահատելին նաեւ այն է, որ հակառակ թուրք եւ արեւմտեան որոշ ուսումնասիրողների կեղծ տեսակէտերի, թէ իբր նուաճուած ժողովուրդները իրենք էին ձգտում *դեւշիրմէի* յանձնել իրենց երեխաներին՝ եւ փորձել են նոյնիսկ «*կաշառքով ենիչերիների զօրակոչի մէջ մտցնել*» հասարակութեան մէջ նրանց համար դիրք եւ պաշտօն ապահովելու համար, Խառատեան ներկայացնում է օտար ողջախոհ հեղինակների ուսումնասիրութիւնները, որոնց մէջ բերուած համոզիչ փաստարկներն ու բազմաթիւ օրինակները ապացուցում են, որ «*յոյները ու միւս ընկճուած ժողովուրդները*

դեւչիրմէն համարել են դժբախտութիւն՝ բռնակալների կողմից պարտադրուած անարդ հարստահարում եւ հնարաւոր բոլոր միջոցներով ընդդիմացել դրան» (էջ 341):

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում եւ պակաս կարեւոր չէ նաեւ մենագրութեան այս գլխի վերջին ենթաբաժինը՝ «Հայ-յունական Եկեղեցական Յարաբերութիւնները (XVIդ.)» վերնագրով, ուր հեղինակը հարուստ նիւթերի հիման վրայ բացայայտում է օսմանեան տիրակալների վարած «զգուշօրէն տարբերակուած» քաղաքականութիւնը միլլէթների նկատմամբ՝ հարկ եղած դէպքում ինչպէս հեղինակն է նշում՝ *«միլլէթներին հակադրելով միմեանց, բորբոքելով նրանց միջեւ եղած փոխադարձ անվստահութիւնն ու հակասութիւնները»* (էջ 349):

Գլխում մանրակրկիտ ներկայացուած եւ մեկնաբանուած են կրօնաղանական հակասութիւնները հայ-յունական յարաբերութիւններում, որ «XVI-XVIIդդ. *տեւականօրէն սրուեցին Երուսաղէմի Ս. Տեղեաց խնդրի շուրջ՝ սեփականատիրական անհաշտ վէճերի պատճառով»* (էջ 351):

Հեղինակը հանգամանալից անդրադարձել է սուր եւ ողբերգական հետեւանք ունեցող 1634ի Ծռազատկի ընդհարումներին յոյների եւ հայերի միջեւ Երուսաղէմում եւ Կոստանդնուպոլսում՝ Գրիգոր Պարոնտէր պատրիարքի ժամանակ, ինչպէս նաեւ 1650ականներին դարձեալ հայերի եւ յոյների միջեւ նոր ուժով բորբոքուած Ս. Տեղեաց սեփականութեան խնդրին՝ որ այս անգամ կենտրոնացաւ այսպէս կոչուած *«հարէչական ժառանգութեան վրայ»* (էջ 354):

Այստեղ գնահատելին այն է, որ հեղինակը վերհանելով հայ-յունական յարաբերութեանց իրողութիւնները եկած է այն եզրայանգման, որ *«Օսմանեան կայսրութիւնում հայ-յունական փոխյարաբերութիւնների մէջ չէր անտեսւում կեղեքուող ժողովուրդների՝ միմեանց հանդէպ քրիստոնէական ու մարդասիրական վերաբերմունքի գործօնը»* (էջ 361):

Աւելացնենք, որ մենագրութիւնում տեղ են գտել Կ.Պոլսի եկեղեցիների լուսանկարները՝ արտատպուած Բարսեղ Թուղլաճեանի Իսթանպուլում 1991ին հրատարակած *Istanbul Ermeni Kiliseleri* հրատարակութիւնից: Մենագրութեան վերջում զետեղուած է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութեան լոյս ընծայած գրքերի ցանկը՝ 1988-2007ին:

Ինքնանուիրում պահանջող նման տարողունակ գիտական աշխատանքը պատուով է կատարել հեղինակը:

Ալբերտ Խառատեանի պատմագիտական լայնածաւալ այս մենագրութիւնը ծանրակշիռ մի ներդրում է հայ պատմագրութեան՝ հայկական գաղթավայրերի պատմութեան բնագաւառում:

ԱՐՇԱԼՈՅՍ ԹՕՓԱԼԵԱՆ